

նուիրած էր Իտալիայէն նոր եկած կեղեստինեան վեց կրօնաւորներու (1) . իսկ Կարտուս Ե Թագաւորին առատաձեռնութեամբ՝ մատուոր փոխուեցաւ եկեղեցիի , որուն առաջին հիմնաքարը դրաւ Թագաւորն իր իսկ ձեռքովը (26 մայիս 1365) , եւ եկեղեցին 1370-ի սեպտեմբերի 15-ին օծուեցաւ « Աւետումն սրբոյ Կուսին » անունով(2) : Քիչ ժամանակէն կեղեստինեաններն ընդարձակեցին իրենց սեպհականութեան սահմանը , այլ եւ այլ տեղերէ նուէրներ ընդունելով , այնպէս որ՝ մինչեւ քաղաքին պարխսպները տարածուեցան շէնքին յարակից մասերը :

1778-ին ջնջուեցաւ կեղեստինեանց կրօնաւորական կարգը . իսկ շէնքը՝ 1785-ին նուէ-համբերու Վարժարան եղաւ : Չորս տարի ետքն եկաւ հասաւ 1789-ի մեծ Յեղափոխութիւնը . կործանեց հիմն ի վեր տապալեց ամէն ինչ , առանց խնայելու ո՛չ մարդու , ո՛չ շէնքի , ո՛չ հնութեան , ո՛չ դրքի(3) , ո՛չ եկեղեցիի եւ ո՛չ իսկ գերեզմանի . . .



Բ

Ս. Պօղոս եկեղեցին եւ պալատը

Կեղեստինեանց վանքին մօտերը կը գտնուէր նաեւ Ս. Պօղոս եկեղեցին , համանուն փողոցին մէջ հիմնուած 640-ին՝ մատրան մը ձեւով , զոր

(1) E. Raunié. *Épitaphier du Vieux Paris*. Paris, 1893, fs. Բ, եր. 304 :

(2) Անդ , եր. 307 :

(3) Denis de Hansy կրտս , որ այս Յեղափոխութեան միջոցին՝ St-Paul-St-Louis եկեղեցիին յատուկ Յիսուսեանց մատենադարանին գրեթէ 300,000-ի չափ քաղլեցին ու կողոպտեցին : Իսկ *Courrier Extraordinaire*-ի 1792 տարւան յունիս 19-ի քերթին մեջ կը կարդանք յայտարարութիւն մը , որով կը ծանուցուի հասարակութեան՝ թէ նոյն օրը « ժամը 2-ին Վանդոմի նրապարակին վրայ վեց հարիւր հասար (ձեռագիր) պիտի այրուին » . . .